«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք

Հոդված 26. ՊԵՏԱԿԱՆ և ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ֆինանսավորումն իրականացնում են պետական մարմինները, բյուջետային ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները, պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումները՝ պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ սույն օրենքին համապատասխան պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող ոչ պետական սուբյեկտները՝ իրենց միջոցների հաշվին:

Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված միջոցառումների անցկացման համար հատկացվող ֆինանսական միջոցների ծախսերի նկատմամբ վերահսկողությունը, իրենց իրավասության սահմաններում, իրականացնում են պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարները, ինչպես նաև այդ նպատակով հատուկ լիազորված Հայաստանի Հանրապետության ~~Ազգային Ժողովի վերահսկիչ պալատի~~հաշվեքննիչ պալատի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների բնագավառը կառավարող պետական մարմնի ներկայացուցիչները: Եթե վերահսկողության իրականացումը կապված է պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու հետ, ապա նշված անձինք պետք է ունենան համապատասխան գաղտնիության աստիճանի տեղեկություններին առնչվելու իրավունք: